«Հաստատում եմ»
ՀՀԿ նախագահի տեղակալ Գալուստ Սահակյան

---
15 հունվարի 2018թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀԿ ԱՎԱԳՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետական կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) ավագների խորհուրդը (այսուհետ՝ Ավագների խորհուրդ) խորհրդակցական մարմին է, որը ստեղծվում է Կուսակցության խորհրդի որոշմամբ՝ Կուսակցության նախագահի առաջարկությամբ:

2. Ավագների խորհուրդը գործում է Կուսակցության կանոնադրության և սույն կանոնակարգի հիման վրա, ինչպես նաև ղեկավարվում է Կուսակցության համագումարի, Ավագների խորհրդի ղեկավար կազմի և ՀՀԿ ղեկավար այլ մարմինների որոշումներով:

3. Ավագների խորհրդի ղեկավար կազմը հաշվետու է Կուսակցության խորհրդին:

4. Ավագների խորհրդի հիմնական խնդիրն է տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրել Կուսակցության նախագահին՝ երկրում տեղի ունեցող քաղաքական կարևոր իրադարձությունների, ինչպես նաև ներկուսակցական կյանքի այն հարցերի վերաբերյալ, որոնք պահանջում են Կուսակցության նախագահի միջամտությունը:

5. Ավագների խորհրդի նախագահի թեկնածությունը հաստատվում է Կուսակցության խորհրդի կողմից՝ Կուսակցության նախագահի ներկայացմամբ:

6. Ավագների խորհուրդը կազմված է 60 տարին լրացած ՀՀԿ անդամներից, որը ղեկավարում է Ավագների խորհրդի ղեկավար կազմը: Ավագների խորհրդի ղեկավար կազմը բաղկացած է Ավագների խորհրդի նախագահից, նրա տեղեկալից և ղեկավար կազմի անդամներից:

7. Ավագների խորհրդի ղեկավար կազմի, դրա աշխատակազմի և ՀՀԿ տարածքային կազմակերպություններում կազմավորված Ավագների խորհրդի մասնաճյուղերի գործունության նյութատեխնիկական և ֆինանսական

ապահովումն իրականացնում է Կուսակցության կազմակերպչական հանձնաժողովը:

II. ԱՎԱԳՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

8. Ավագների խորհրդի ղեկավար կազմն իր գործունեությունն իրականացնում է նիստերի հրավիրման, որոշումների ընդունման և սույն կանոնակարգով սահմանված գործառույթների իրականացման միջոցով:

9. Ավագների խորհրդի ղեկավար կազմի նիստերը հրավիրվում են Կուսակցության նախագահի առաջարկությամբ կամ ըստ անհրաժեշտության՝ Ավագների խորհրդի ղեկավար կազմի նախագահի նախաձեռնությամբ, բայց ոչ պակաս քան առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

10. Ավագների խորհրդի ղեկավար կազմն իրավասու է՝

10.1. տեղեկատվություն տրամադրել Կուսակցության նախագահին՝ երկրում տեղի ունեցող քաղաքական կարևոր իրադարձությունների, ինչպես նաև ներկուսակցական կյանքի այն հարցերի վերաբերյալ, որոնք պահանջում են Կուսակցության նախագահի միջամտությունը.

10.2. Կուսակցության նախագահին առաջարկություններ ներկայացնել հասարակական-քաղաքական, ինչպես նաև ներկուսակցական կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ.

10.3. Կուսակցության նախագահին առաջարկություններ ներկայացնել Ավագների խորհրդի անդամների նկատմամբ խրախուսման կամ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ.

10.4. տեղեկատվություն ստանալ կուսակցության տարածքային ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում և Կուսակցության նախագահի հանձնարարությամբ վերահսկողություն իրականացնել նրանց գործունեության, ինչպես նաև կուսակցության համագումարի և ղեկավար մարմինների որոշումների կատարման ընթացքի նկատմամբ.

10.5. կազմակերպել ներկուսակցական, միջկուսակցական բանավեճեր և քննարկումներ՝ հասարակական-քաղաքական և կուսակցական գործունեության հարցերի վերաբերյալ:

11. Ավագների խորհրդի տարածքային մասնաճյուղերը կազմավորվում են Ավագների խորհրդի ղեկավար կազմի կողմից՝ ՀՀԿ տարածքային խորհուրդների նախագահների ներկայացմամբ: Ավագների խորհրդի տարածքային մասնաճյուղերը կազմված են առնվազն 7 անդամից, այդ թվում՝ մասնաճյուղի ղեկավարը: Ավագների խորհրդի տարածքային մասնաճյուղերը իրենց գործունեությունն իրականացնում են ժողովների հրավիրման, առաջարկությունների ներկայացման և կուսակցության վերադաս մարմինների

որոշումների կատարման միջոցով: Ավագների խորհրդի տարածքային մասնաճյուղերի ժողովները հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ մասնաճյուղի ղեկավարի նախաձեռնությամբ:

12. Ավագների խորհրդի անդամներն իրավասու են Ավագների խորհրդի մասնաճյուղերին և /կամ/ Ավագների խորհրդի ղեկավար կազմին ներկայացնել առաջարկություններ՝ Ավագների խորհրդի գործունեության հետ կապված հարցերի վերաբերյալ:

13. Կուսակցության նախագահի առաջարկությամբ կամ իր նախաձեռնությամբ Ավագների խորհրդի ղեկավար կազմը Կուսակցության նախագահին կարծիք է ներկայացնում՝

13.1. Կուսակցության գաղափարախոսական հիմնադրույթների, ծրագրային և կանոնադրական փաստաթղթերի նախագծերի, կուսակցության մարտավարական սկզբունքների, ինչպես նաև հաստատված փաստաթղթերում փոփոխություններ կատարելու նախագծերի վերաբերյալ.

13.2. Կուսակցության նախընտրական ծրագրերի, Ազգային ժողովի պատգամավորի, ինչպես նաև համամասնական ընտրակարգով ավագանու անդամի թեկնածուների ցուցակների և այլ կուսակցությունների հետ նախընտրական կամ հետընտրական դաշինքների կազմման վերաբերյալ.

13.3. Կուսակցության կողմից պաշտպանվող համայնքի ղեկավարի թեկնածուի և ավագանու անդամի թեկնածուների վերաբերյալ.

13.4. այլ պետությունների քաղաքական կուսակցությունների հետ համագործակցելու, միջազգային կուսակցական միություններին և ասոցիացիաներին անդամագրվելու վերաբերյալ.

13.5. ներկուսակցական ակտերի (որոշում, կարգադրություն, հանձնարարական, հրահանգ, հայտարարություն, ցուցում և այլն) նախագծերի վերաբերյալ.

13.6. Կուսակցության նախագահի առաջին տեղակալի, տեղակալների, կուսակցության հանձնաժողովների նախագահների, ինչպես նաև ՀՀԿ կանանց և երիտասարդության ոլորտային ստորաբաժանումների ղեկավարների թեկնածությունների վերաբերյալ.

13.7. Կուսակցության նախագահի առաջին տեղակալի և տեղակալների համակարգման ոլորտների և հարցերի վերաբերյալ.

պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքական պաշտոններում նշանակման կամ ընտրության ներկայացվող՝ Կուսակցության թեկնածուների վերաբերյալ: